

իւր աւերը դեռ կը գորովէ՛ մեր սիրտն ու կը խռովէ՛ մեր հոգին: Իւր անցած փառաց ու շնորհաց կախարդանօք միայն զօշոտուած են մեր՝ հայորդւոցս աչերը: Եւ ո՛րքան պիտի խաբուինք՝ լոկ քաղաքական կամ երկրաբանական հասարակ պատճառաց մէջ փնտռելով անոր կործանումը:

Ո՛չ, այդ չէր Անին: Զայն ճանաչելու համար մեք աւելի ուշադրութեամբ զննելու ենք իւր անցեալը. եւ այն ժամանակ պիտի տեսնենք՝ թէ ի՛նչպէս այդ «ամուրն Անի» եւ իւր շրջակայ աւաններն ալ զերծ չմնացին ապականութեան թոյնէն, եւ թէ այս իսկ նիւթեց գլխաւորապէս անոնց կորուստը: Յնցող եւ ահագին է պատմչին ամբաստանութիւնն անոնց դէմ, թէ «Առաւել յամբարտաւանութիւն կրթեալ՝ ընդդէմ երկնից կայթս հարկանէին»: Յիծաղկոտ ոստանը մանաւանդ, իւր ուժեղ գեղոյն գիտակցութեամբ զգլխած, նախանձորդ մը հանդիսացաւ Բարեւրնի ու Պոմպէի, եւ իւր աթոռը դրաւ անոնց մէջ՝ որ «միայն հեշտոռեան եւ փափկորեան ըսպասեն, եւ ի գործոց աղտեղորեան ոչ խորշին. այլ միայն արբեալ լինին ի ցանկութեանցն՝ որ զնոսա ըմբռնեալ ունի» (Լաստ. 109, '11): Անոր ազատաց համախմբութեանց մէջ դեռ կը տիրէ հին դարերու